ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Ս.

Ազգերի (ժողովուրդների) իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի այն նորմերից է, որոնք առավել գործուն քննարկումների առարկա են և առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում, քանզի առնչվում է չափազանց զգայուն՝ հակամարտությունների կարգավորման հարցին:

Ինչպես միջազգային իրավունքի որևէ այլ նորմի պարագայում, ինքնորոշման իրավունքի դեպքում ևս կիրառման շրջանակներն ուրվագծված են այդ նորմի կարգավիճակով, իրավակիրառական պրակտիկայում առկա լուծումներով, ինչպես նաև իրավագիտության ոլորտում այդ խնդրի լուծմանը նվիրված ուսումնասիրություններով:

Վերջին շրջանում՝ հատկապես Կոսովոյի անկախության հռչակումից և ավելի քան երեք տասնյակ երկրների կողմից ճանաչվելուց հետո, ավելի ու ավելի հաճախ է հնչում հետևյալ հարցադրումը. ո՞րն է ինքնորոշման իրավունքի կարգավիճակը միջազգային իրավունքի շրջանակներում, և որո՞նք են այդ իրավունքի կիրառման չափանիշներն ու պայմանները:

Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը՝ որպես միջազգային իրավունքի նորմ: Ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը գիտական քննարկումների առարկա էր դեռևս XVI դարից սկսած, իսկ առաջին անգամ, որպես իրավական փաստաթղթի դրույթ, ձևակերպվել է ԱՄՆ անկախության հռչակագրում (1776 թ. հուլիսի 4), ապա Իրավունքների բիլլում (ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխություններն ու լրացումները) (1787 թ. սեպտեմբերի 17), ինչպես նաև Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում (1789 թ.): Թեև այդ սկզբունքն օգտագործվել է մի շարք կայսրությունների փլուզումից հետո նոր պետությունների ձևավորման ժամանակ, սակայն, որպես միջազգային իրավունքի նորմ, այն սկսել է կիրառվել 1940-ական թվականներին և ավելի ուշ ընդունված՝ ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերում ներառվելուց հետո: Այս իրավունքի հիմնարար նշանակությունը և բարձր կարգավիճակը միջազգային իրավունքում գրեթե ոչ ոք չի վիճարկում: Կա սոսկ տարածված մեկ «մոլորություն», որով հաճախ որոշ երկրներ փորձում են քողարկել իրենց ծավալապաշտական շահերից բխող ժխտողական վերաբերմունքը միջազգային իրավունքի կիրառման նկատմամբ: Դա ինքնորոշման սկզբունքի հակադրումն է տարածքային ամբողջականության կամ սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին, թեև այդ հակադրման հակահիրավական բնույթն ակնհայտորեն երևում է խնդրի իրավագիտական վերլուծության պարագա-

յում[1], ինչը միանշանակորեն հաստատում է, որ ոչ միայն հակասություն չկա, այլև նման հակասությունը սկզբունքորեն հնարավոր չէ, քանզի դրանք գտնվում են միջազգային իրավունքի տարբեր հարթություններում: Պատահական չէ, որ, օրինակ, Ադրբեջանի ներկայացուցիչների միակ արձագանքն այդ մոտեցմանը[2] ոչ թե ապացուցում է հակառակը, այլ միայն փորձ է անում գլխիվայր շուռ տալ իրավիճակը՝ նշելով, որ այն «միմյանց հակադրում է ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականության սկզբունքը»: Ավելին, Ադրբեջանում արդեն սկսել են հասկանալ, որ այդ երկրի իշխանությունների հայտարարությունները՝ տարածքային ամբողջականության գերակայության մասին, սոսկ քարոզչական նշանակություն ունեն, անգամ եթե խնդիրը քննարկվում է Հելսինկյան եզրափակիչ ակտի շրջանակներում, և սկսել են ի հայտ գալ դրանց սնանկությունը մատնացույց անող հրապարակումներ[3]: Այդ հրապարակումների հեղինակները միանգամայն արդարացիորեն նշում են, որ ոչ միայն Հելսինկյան եզրափակիչ ակտը նման հետևության հիմք չի տալիս, այլև ՄԱԿ-ի «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրով սահմանված յոթ գլխավոր սկզբունքների շարքում ինքնորոշման սկզբունքը ներառվել է, իսկ տարածքային ամբողջականության սկզբունքը՝ ոչ, ակնհայտորեն նկատի ունենալով թե այդ փաստաթղթերի իրավական բովանդակությունը և թե ՄԱԿ-ի կանոնադրության գերակայությունը մյուս միջազգային կազմակերպությունների փաստաթղթերի նկատմամբ: Այդուհանդերձ, քանի որ նման հրապարակումների նպատակը էլ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմ վերադարձնելն է, փորձ է արվում առաջարկել այլ մոտեցում, որը կառուցված է հետևյալ երկու դրույթի վրա՝

- միջազգային իրավունքը մինչ այժմ չի կարողացել համաձայնեցնել իրենց բովանդակությամբ հակասական այդ երկու սկզբունքները,
- ղարաբաղյան հակամարտությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև է, այլ ոչ թե Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի:

Իհարկե, այս դրույթներն իրական և իրավական որևէ հիմք չունեն, ինչը հաստատում է փաստերի և միջազգային իրավունքի փաստաթղթերի անաչառ ուսումնասիրությունը[4]: Ավելին, ակնհայտ է, որ այս դրույթների միաժամանակյա առաջադրումը զուրկ է որևէ տրամաբանությունից, քանզի դրանք բացարձակապես տարբեր հարթություններում գտնվող հարցադրումներ են և ընտրված են թույլ դիրքերն ինչ-որ կերպ ամրացնելու համար: Եթե Ադրբեջանը կարողանար հիմնավորել, որ հակամարտությունն իր և Հայաստանի միջև է, ապա ինքնորոշման իրավունքի խնդիրն ընդհանրապես կարիք չէր լինի արծարծել: Իհարկե, տարածքա-

---

[1] **Թորոսյան Տ.,** Հակամարտությունների կարգավորման իրավական հիմքը. տարածքային ամբողջականությո՞ն, թե՞ ինքնորոշման իրավունք (Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 1, էջ 3-16):

[2] **Ахундов Ф.,** *Кто виноват в Карабахском конфликте?, http:/news.trendaz.com/?show-=news&newsid=1135091&lang=RU*

[3] **Габ, боглу Р., Рустамов Р.,** *Армени грубо попирает нормы международного права, www.zerkalo.az.php?id=28331.*

[4] **Թորոսյան Տ.,** նշվ. աշխ.:

յին ամբողջականության խնդիր՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ, գոյություն ունի որպես հետևանք, ինչպես օրինակ՝ Արծվաշենի վերաբերյալ, որը բռնազավթել է Ադրբեջանը: Սակայն ակնհայտ է, որ այս դեպքում խախտված է ոչ թե Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, այլ Հայաստանի: Պատահական չէ, որ Մինսկի խմբի համանախագահները (տվյալ դեպքում՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ Բ. Ֆասիեն) հայտարարում են, որ «Կոսովոյում հակամարտությունը մեկ երկրի ներսում է: Ղարաբաղյան հակամարտության պարագայում գործ ունենք միջազգային իրավունքի միաժամանակյա կիրառման երկու դեպքի հետ՝ Ադրբեջանի ներսում հակամարտություն և միջպետական հակամարտություն»[5]:

Ինչ վերաբերում է ինքնորոշման սկզբունքի իրավական բովանդակությանը, ընդգրկման սահմաններին, կարգավիճակին միջազգային իրավունքում, ապա տարբեր մեկնաբանությունների պարագայում անգամ հիմնարար մոտեցումները գիտատեսական հարթությունում գրեթե նույնական են: Առավել ընդհանրական մոտեցումը ներկայացրել են ֆրանսիացի մի խումբ իրավագետներ՝ Նգուեն Կուոկ Դինը, Պատրիկ Դայեն, Ալեն Պելլեն. «…Ազգերի ինքնորոշման սկզբունքը ռացիոնալ հիմնավորում է հաղորդում ազգային պետությանը, ինչն ունի համաշխարհային նշանակություն: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա հիմնված այդ սկզբունքի համաձայն, որպեսզի ինքնիշխանությունը լինի գործոն, յուրաքանչյուր ազգ իրավունք ունի ստեղծելու անկախ պետություն: Պետք է լինի այնքան պետություն, որքան ազգ կա: Պետությունների սահմանները պետք է համընկնեն ազգերի սահմանների հետ: Պետությունը, որը ներառում է մի քանի ազգ, կարող է այնպես բաժանվել մասերի, որ ապահովվի սահմանների նման համապատասխանությունը: Եվ հակառակը, մի քանի մասերի բաժանված և տարբեր պետությունների մեջ ներառված ազգն իրավունք ունի վերականգնելու իր միասնությունը մեկ պետության մեջ»[6]:

Այս մեկնաբանությունը կարող է համարվել խիստ տեսական՝ հաշվի առնելով առաջարկվող ճշգրիտ բաժանման գործնական անհնարինությունը, սակայն ակնհայտ է, որ կիրառվել է հնարք, որն առավել դյուրին է դարձնում մոտեցման հիմնարար գաղափարների ընկալումը: Հեշտ է նկատել, որ ինքնորոշման իրավունքի առանցքային գաղափարների տեսակետից լիակատար ներդաշնակություն կա վերը բերված մեկնաբանության և Յ. Պիենկոսի շատ ավելի սեղմ ձևակերպման միջև. «Ինքնորոշման իրավունքը պատկանում է բոլոր ժողովուրդներին: Ազգերի ինքնորոշման սկզբունքի տարր է հանդիսանում անջատման (սեցեսիայի իրավունքը), այսինքն՝ առանձին պետություն ստեղծելու կամ այլ պետությանը միա-

---

[5] **Габибоглу Р.,** *Сопредседатели считают Карабахский конфликт межгосударственным, www.zerkalo.az/print.php?id=29184*

[6] **Нгуен Куок Динь, Дайе П., Пелле А.,** *Международное публичное право, в 2-х т., т. 1, кн. 1 – Формирование международного права; кн. 2 – Международное сообщество (пер. с фр.), Сфера, 2000, с. 27.*

նալու նպատակով անջատումը գոյություն ունեցող պետությունից»[7]: Հեշտ է նկատել, որ այս մոտեցումը միանգամայն նույնական է միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում կիրառվող դրույթների հետ[8]: Ավելին, այդ ձևակերպումները վկայում են, որ սնանկ են պնդումները, թե մեկ ժողովրդի մեկից ավելի հատվածներ չեն կարող կիրառել ինքնորոշման իրավունքը:

Միջազգային իրավունքի շրջանակներում ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի ճշգրտման տեսակետից էական նշանակություն ունեն նաև ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի որոշումները մի շարք գործերի վերաբերյալ: Յոթանասունականների սկզբին այդ դատարանին ուղղակի դերակատարություն էր վերապահված ինքնորոշման իրավունքի կիրառման հարցում: Հենց ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի վճռի հիման վրա ճանաչվեց Նամիբիայի անկախությունը: Սակայն ավելի ուշ՝ 1975-ին, Արևմտյան Սահարայի ապագաղութացման հետագա ընթացքը որոշելիս Դատարանի կարծիքը Գլխավոր ասամբլեայի համար այլևս ուներ ոչ թե վերջնական որոշման, այլ իրավական բնույթի աջակցության նշանակություն[9]: Դատարանն անդրադարձել է ինքնորոշման իրավունքին նաև 1995-ին՝ Արևելյան Թիմորի կապակցությամբ[10]: Արդարադատության միջազգային դատարանն այդ գործի[11] 29-րդ պարագրաֆում ինքնորոշման իրավունքը ճանաչել է որպես միջազգային իրավունքում *erga omnes* (լատիներեն՝ բոլորին առնչվող, համապարտադիր) բնույթ ունեցող նորմ. «29…Դատարանի կարծիքով, Պորտուգալիայի պնդումը, որ ազգերի ինքնորոշման իրավունքը, որ զարգացվել է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և պրակտիկայով, ունի *erga omnes* բնույթ, անթերի է: Ազգերի ինքնորոշման սկզբունքը ճանաչվել է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և Արդարադատության միջազգային դատարանի իրավական վճիռներով[12]: Դա ժամանակակից միջազգային իրավունքի էական սկզբունքներից մեկն է»: Բայց, միաժամանակ, Դատարանը հիշեցրել է իր գործունեության առանձնահատկությունը, համաձայն որի՝ միջազգային իրավունքում այս կամ այն նորմի կարգավիճակի ճանաչումը Դատարանի կողմից կարող է որևէ պետության նկատմամբ դրա կիրառման հնարավորություն տալ, եթե պետությունը հայցի կողմ է. «Այդուհանդերձ, Դատարանը համարում է, որ նորմի *erga omnes* բնույթը և իրավակիրառությանը համաձայնություն տալը երկու տարբեր բաներ են: Անկախ հանձնառությունների բնույթից՝ Դատարանը չի կարող գնահատել պետության վարքի օրինականությունը, երբ իր դատողությունները

---

[7] **Pienkos J.,** *Prawo miedzynarodowe publicne. Zakamycze, 2004, s. 73.*

[8] **Թորոսյան Տ.,** *նշվ. աշխ.:*

[9] *Westen Sahara, Advisory Opinion, 1975, ICJ 12(16 Oct.).*

[10] *East Timor (Portugal & Australia), Judgment, International Court of Justice Reports 1995, p. 102.*

[11] *http://www.icjcij.org/icjwww/icases/ipa/ipa_ijudgments/ipa_ijudgment_19950630. pdf*

[12] *Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) Notwithstanding Security Council Resolution 276(1970), Advisory Opinion, ICJ Reports 1971, p. 31-32, paras. 52-53; Western Sahara, Advisory Opinion, ICJ Reports 1975, p. 31-33, paras. 54-59.*

ենթադրում են այն պետության վարքի գնահատումը, որը հայցի կողմ չէ: Նման դեպքերում Դատարանը չի կարող գործել, եթե անգամ դիտարկվող իրավունքը *erga omnes* իրավունք է»:

Ամերիկյան երկրների՝ Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը նույնպես ինքնորոշման իրավունքին առնչվող դեպքեր քննարկելիս[13] արձանագրել է, որ ինքնորոշման իրավունքն ունի *erga omnes* իրավական կարգավիճակ, այսինքն՝ ինքնորոշման իրավունքը մի նորմ է, որի հարգումը պարտադիր է յուրաքանչյուր պետության համար՝ առանց որևէ վերապահության:

Միջազգային իրավունքի ինստիտուտը 2005 թ. ընդունել է բանաձև[14], որով ձևակերպել է միջազգային իրավունքի նորմերի *erga omnes* կարգավիճակից բխող՝ պետությունների պարտավորությունները: Այն ոչ միայն հաստատում է ցեղասպանության և ագրեսիայի արգելման, մարդու հիմնական իրավունքների, ինքնորոշման սկզբունքի հիմնարար արժեքներ լինելն ու դրանց *erga omnes* կարգավիճակը, այլև պետությունների պարտավորություններն այդ նորմերի անվերապահ հարգման, ինչպես նաև մյուս պետությունների իրավունքները՝ այդ նորմերը չհարգող պետության նկատմամբ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն վերաբերմունք դրսևորելու և միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Արդարադատության միջազգային դատարանն ինքնորոշման իրավունքը ճանաչել է[15] նաև *jus cogens*[16] նորմ (լատիներեն՝ համապարտադիր, անվերապահ օրենք): Այս նորմի բարձրագույն իրավական կարգավիճակը, մասնավորապես, արտացոլված է Միջազգային համաձայնագրերի մասին Վիենայի կոնվենցիայի[17] 53-րդ և 64-րդ հոդվածներում.

«Հոդված 53. Համաձայնագրեր, որոնք հակասության մեջ են ընդհանուր միջազգային իրավունքի անվերապահ նորմին (*jus cogens*): Համաձայնագիրն անվավեր է, եթե կնքման պահին այն հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի անվերապահ նորմին: Սույն Համաձայնագրի շրջանակներում ընդհանուր միջազգային իրավունքի անվերապահ նորմը մի նորմ է, որը երկրների միջազգային հանրության կողմից ըն-

---

[13] *Inter-American Comission on Human Rights, Organization of American States, Press Communiqué no. 13/93 (May25, 1993).*

[14] *Resolution Obligations* **erga omnes** *in International Law. Session 2005, Fifth Commission, The Institute of International Law.*

[15] **Gros Espiel H.,** *The Right to Self-Determination, UN Doc. E/CN.4/Sub.2/405/Rev.1, UN Sales N E.79.XIV.5(1980), p. 12. Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (S.W. Africa) 1971, International Court of Justice 16, 89-90(Amoun J., separate opinion).* **Parker K., Neylon L.,** *Jus cogens: Compelling the Law of Human Rights - Hastings International Law Review, N 585, 1998).* **Parker K.,** *Definition of Self-Determination -First International Conference on the Right to Self-Determination. United Nations, Geneva, August 2000.*

[16] Միջազգային իրավունքում *Jus Cogens* և *Erga Omnes* նորմերի կարգավիճակի մասին տես, օրինակ, ***Rubin A.P.*** *Actio Popularis, Jus Cogens and Offenses Erga Omnes? - New England Law Review, 2001, vol. 35, N 2, p. 265-280.*

[17] *Vienna Convention on the Law of Treaties, May 23, 1969, 1155 U.N.T.S. 331.*

դունվում և ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն նույնպիսի բնույթ ունեցող ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով:

Հոդված 64. Ընդհանուր միջազգային իրավունքի նոր՝ անվերապահ նորմի (*jus cogens*) առաջացումը: Եթե առաջանում է ընդհանուր միջազգային իրավունքի նոր՝ անվերապահ նորմ, ապա գոյություն ունեցող որևէ համաձայնագիր, որը հակասում է այդ նորմին, դառնում է անվավեր և դադարում է»:

Այսինքն՝ ինքնորոշման իրավունքը հիմնական միջազգային իրավունքի մանդատային նորմ է, որի պարտադիր լինելուց որևէ մեկը չի կարող իրեն ազատ համարել կամ որևէ մեկին ազատել՝ ի տարբերություն միջազգային իրավունքի *jus dispositivum* նորմերի, որոնք սկսում են գործել որևէ կողմի համար, եթե այդ կողմը համաձայն է այդ նորմը ստանձնել միջազգային համաձայնագրի միջոցով:

Հետաքրքիր է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման առընչությամբ, անդրադառնալով միջազգային իրավունքին, ադրբեջանցի իրավագետ Ռ. Կարաևը[18] «չի նկատում» ինքնորոշման իրավունքի վերոհիշյալ երկակի անվերապահ կարգավիճակը և փորձում է վկայակոչել *uti possidetis* (լատիներեն՝ ինչը տնօրինում եք) սկզբունքը, համաձայն որի՝ իր կարծիքով, նախկին խորհրդային հանրապետությունների սահմանները ճանաչվել են որպես ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած պետությունների սահմաններ: Ռ. Կարաևը հավանաբար տեղյակ չէ, որ այդ սկզբունքի կիրառման դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմի մեջ պետք է ներառվեն բոլոր հարակից տարածքները, որոնք այսօր գտնվում են ԼՂՀ վերահսկողության ներքո, քանզի *uti possidetis*-ը միջազգային իրավունքի սկզբունք է, որը տարածքը և այլ սեփականությունը կոնֆլիկտի վերջում թողնում է այն տնօրինողին, եթե այլ բան նախատեսված չէ համաձայնագրով: Ծագելով հռոմեական իրավունքից՝ այս սկզբունքը հնարավորություն է տալիս պատերազմող կողմին պահանջել տարածք, որը ձեռք է բերել պատերազմի հետևանքով: Նորմը պատմականորեն օգտագործվել է տարածքային նվաճումների օրինական ձևակերպման համար, ինչպես օրինակ, 1870 թ. Գերմանական կայսրությանը Էլզաս-Լոթարինգիայի միացման դեպքում:

Ըստ Յ. Կլաբերսի[19]՝ ինքնորոշման իրավունքի ուսումնասիրությունները սովորաբար փորձում են պատասխանել երկու հարցի. արդյո՞ք ինքնորոշման իրավունքը գոյություն ունի միջազգային իրավունքում անվերապահորեն, և եթե այդպես է, ապա դա ո՞ր X խմբին է վերաբերում և նրանց իրավունք տալի՞ս է անջատվել:

Վերը բերված փաստարկները վկայում են, որ լրացուցիչ հիմնավորումների կարիք չկա ապացուցելու համար, որ ինքնորոշման իրավունքն անվերապահ և համապարտադիր՝ *erga omnes* և *jus cogens* կարգավի-

---

[18] **Караев Р.**, *Косово: прецедент или нет?, www.zerkalo.az/print.php?id=27756*

[19] **Klabbers J.,** *The Right to be Taken Seriously: Self-Determination in International Law, Human Rights Quarterly. Baltimore: Feb 2006, vol. 28, Iss. 1, p. 186-206.*

ճակներով օժտված միջազգային իրավունքի նորմ է, որի կիրառման նպատակը կարող է լինել ինքնորոշվող ժողովրդի կողմից ազատորեն ընտրված հետևյալ երեք դեպքերից մեկը.

- ինքնիշխան և անկախ պետության ստեղծում,
- ազատ միացում անկախ պետությանը կամ նրա հետ միավորում,
- որևէ այլ քաղաքական կարգավիճակ [20]:

Այդուհանդերձ, կոնկրետ դեպքերի առումով, շատ կարևոր է Կլաբերսի երկրորդ հարցադրման պատասխանը: Այդ նպատակով Կլաբերսը դիտարկել է Կոսկեննիեմիի[21] առաջարկած՝ ինքնորոշման բաժանումը երկու խմբի՝

- «լավ», որի նախադրյալներն են ժողովրդավարության ձգտումն ու արդարության զգացումը,
- «վատ»՝ ազգայնամոլական, մեկուսացման և բացառման զգացումները:

Արդեն իսկ «զգացում» բառի առկայությունը երկու խմբերի ձևակերպումներում վկայում է, որ այս դասակարգումը խիստ սուբյեկտիվ է: Երկրորդ ձևակերպման ուժեղացման փորձը՝ օգտագործելով Ի. Բեռլինից մեջբերումը՝ «Մարդիկ նախընտրում են ղեկավարվել յուրային բռնակալի, քան զգույշ, արդար, ազնիվ և միայն լավ նկատառումներով գործող օտար կառավարչի կողմից»[22], իրավիճակը չի փոխում և առաջարկվող դասակարգումը չի դարձնում կիրառելի:

Յ. Կլաբերսն ինքնորոշման խնդրին անդրադառնում է ևս մեկ տեսակետից: Ըստ նրա՝ իրավական և քվազիիրավական միջոցները միտված էին ինքնորոշման իրավունքը կիրառելու մինչև ապագաղութացման վերջը, սակայն այժմ, երբ ինքնորոշումը չի կարող այլևս դիտվել որպես գաղութի անկախության իրավունք, այն կարող է դիտվել որպես պրոցեդուրային իրավունք, որը կիրառվում է, երբ ժողովուրդները որոշումներ են ընդունում իրենց ապագայի մասին:

Ընդհանրապես, ինքնին «գաղութատիրություն», «ապագաղութացում» եզրերի կիրառումը խիստ պայմանական է և բխում է այդ եզրերի հոգեբանական ընկալումից՝ սովորաբար զուգորդվելով ինչ-որ անդրօվկիանոսյան տարածքային նվաճումներին և գերտերությունների քաղաքական շահերին: Այդուհանդերձ, այդ եզրի սահմանումները որևէ աշխարհագրական կամ այլ սահմանափակումներ չեն պարունակում: Որպես օրինակ՝ կարելի է դիտարկել «Վիկիպեդիա» էլեկտրոնային հանրագիտարանի սահմանումը. «Գաղութատիրությունն ազգային ինքնիշխանության ընդլայնում է իրենց սահմաններից այն կողմ գտնվող տարածքների նկատմամբ՝ հիմնադրելով բնակավայր գաղութներ կամ վարչական ենթակայություններ, որոնց ներքո բնիկ ժողովուրդները ուղղակիորեն կառա-

[20] *Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Cooperation among States in accordance with the Charter of the United Nations (A 8082), http://daccessdds.un.org/doc-/RESOLUTION/GEN/NR0/348/90/IMG/NR034890.pdf?OpenElement.*

[21] **Koskenniemi M.**, *National Self-Determination Today: Problems of Legal Theory and Practice, International & Comparative Law Quarterly, 43, 194, p. 241, 249.*

[22] **Berlin I.,** *Four Essays on Liberty. L., 1969, p. 157-58.*

վարվում են կամ տեղահանվում»[23]: Ակնհայտ է, որ, մասնավորապես, թե Ռուսական կայսրության և թե ԽՍՀՄ-ի ձևավորումը, ինչպես յուրաքանչյուր կայսրության ձևավորում, գաղութացման դասական օրինակներ են, իսկ փլուզումը և այդ տարածքում նոր պետությունների ձևավորումը լիարժեքորեն համապատասխանում են ապագաղութացման չափանիշներին և միանգամայն արդարացիորեն կարող են դիտվել որպես այդպիսի գործընթացի փուլեր: Հետևաբար, այդ տարածքում տեղի ունեցող հակամարտություններն ուսումնասիրելիս այդ հանգամանքը ևս պետք է հաշվի առնել: Իհարկե, փորձեր արվում են այդ գործընթացները ապագաղութացման հարթությունից դուրս դնելու ուղղությամբ: Օրինակ, Ռ. Կարաևը, փորձելով ժխտել Ղարաբաղյան խնդրի առնչությունը ապագաղութացման գործընթացին, գրում է. «Ադրբեջանը երբեք չի եղել գաղութային երկիր, հակառակը, Թուրքմենչայի և Գյուլիստանի պայմանագրերը իրավաբանորեն ամրագրել են Ռուսական կայսրության կողմից Ադրբեջանի բռնազավթումն ու գաղութացումը՝ իր բոլոր հողերով, ներառյալ՝ Ղարաբաղի տարածաշրջանը: ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանի Հանրապետությունը միջազգային հանրության կողմից ճանաչվեց որպես անկախ պետություն… և *uti possidetis* սկզբունքի համաձայն՝ ճանաչվեցին նախկին խորհրդային միութենական հանրապետությունների սահմանները»[24]: Սակայն հեշտ է նկատել, որ այս մեջբերումը ոչ թե ժխտում, այլ հաստատում է գաղութացման առկայությունը Ղարաբաղյան խնդրի առնչությամբ: Թեև Կարաևը աղավաղում է պատմությունը՝ նշելով, որ Ռուսական կայսրությունը բռնազավթել է Ադրբեջանը (Ադրբեջան պետությունը հիմնադրվել է 1918 թ.՝ այդ կայսրության փլուզումից հետո), սակայն անվիճելի է, որ Ռուսական կայսրության ինքնիշխանության ընդլայնումը Կովկասյան լեռներից այս կողմ հնարավոր չէ այլ կերպ գնահատել, քան գաղութացում: Ավելին, Ռուսական կայսրության փլուզումից մի քանի տարի անց ԽՍՀՄ-ի ձևավորումը նույն կայսրության այլակերպումն էր, հետևաբար և գաղութացման մի նոր փուլ: Չպետք է մոռանալ նաև, որ թե Հայաստանի, թե Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը տեղի է ունեցել ռուսական Կարմիր բանակի ռազմական և բարոյա- կան ճնշումների ազդեցությամբ: Թե Ռուսական կայսրությունը և թե ԽՍՀՄ-ը լիովին համապատասխանում են գաղութային կայսրությունների ձևակերպումներին: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը քննարկելիս ապագաղութացման գործոնը հանիրավի գրեթե աչքաթող է արված: Ընդամենը մի քանի հրապարակումներ են այս կամ այն չափով անդրադարձել դրան[25]: Իհարկե, առանց այս գործոնի էլ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքն անխոցելի է, սակայն խնդիրն ավելի ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ են նաև այդ գործոնի

---

[23] *http://en.wikipedia.org/wiki/Colonialism*

[24] **Караев Р.**, նշվ. աշխ.:

[25] **Mouradian C.,** *The Mountainous Karabagh Question: Inter-Ethnic Conflict or Decolonization Crisis?- Armenian Review, vol. 43, N 2-3/170-171, 1990, p. 1-34,* **Starovoitova G.**, *Sovereignty after Empire. Self-Determination Movements in the Former Soviet Union. Institute of Peace (USA), 1996.*

հանգամանալից ուսումնասիրությունն ու ներկայացումը՝ թեկուզև անհարկի շահարկումները կանխելու նպատակով:

Ինքնորոշման իրավունքի կիրառման չափանիշները: Ինքնորոշման իրավունքի կիրառումը, չնայած միջազգային իրավունքում այդ նորմի բարձր իրավական կարգավիճակին, շատ հաճախ ուղեկցվում է չափազանց լուրջ դժվարություններով, քանզի ուղղակիորեն առնչվում է հզոր տերությունների ու կայսրությունների շահերին: Հատկանշական է, որ թեև Խորհրդային Միությունն ակտիվորեն նպաստում էր աֆրիկյան երկրների անկախացման (ապագաղութացման) գործընթացին, բայց միաժամանակ դաժանորեն հետապնդում էր բալթյան և անդրկովկասյան հանրապետություններում անկախության գաղափարի արծարծման որևէ դրսևորում: Երկակի մոտեցումների սկզբունքը հաճախ տիրապետող է նաև Միացյալ Նահանգների ու Եվրոպայի պարագայում: Այս իրավիճակին նպաստում է այն հանգամանքը, որ դեռևս իրավական սահմանում չեն ստացել այն չափանիշները, որոնց առկայությամբ պետք է պայմանավորված լինի այս կամ այն կոնկրետ դեպքում ինքնորոշման իրավունքի կիրառումը: Ընդ որում, խնդիրն այն չէ, որ նման չափանիշների սահմանումը անհնարին է կամ չափազանց բարդ խնդիր, այլ որ դա էապես կդժվարացնի որոշ պետությունների և կազմակերպությունների քաղաքական շահերի ազդեցությունը ինքնորոշման իրավունքի կիրառման կոնկրետ դեպքերում: Ահա թե ինչու, թեև ըստ ամենայնի խոչընդոտներ են հարուցվում միջազգային իրավունքի շրջանակներում նման ձևակերպումների ու սահմանումների համար (օրինակ, անգամ «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրին դեմ են քվեարկել Միացյալ Նահանգները, Կանադան, Ավստրալիան, ձեռնպահ՝ Ադրբեջանը, Վրաստանը, Ռուսաստանը և այլն)[26], սակայն հակամարտությունների կարգավորմանը նվիրված մի շարք ուսումնասիրություններ վկայում են, որ կան նման չափանիշների սահմանման բավական հաջող օրինակներ: Իհարկե, տարբեր ուսումնասիրողների առաջարկած չափանիշների համախմբերը միմյանցից ինչ-որ չափով տարբերվում են, սակայն դրանք միանգամայն համադրելի են: Առավել ընդհանրական ձևակերպումը՝ մի փոքր այլ մոտեցումով, կիրառել է Կանադայի Գերագույն դատարանը. «Անջատման իրավունքը առաջանում է միայն միջազգային իրավունքի շրջանակներում՝ ինքնորոշման սկզբունքի ներքո՝

- երբ ժողովուրդը կառավարվում է որպես գաղութային կայսրության մի մաս,
- երբ ժողովուրդը ենթակա է օտարերկրյա գերիշխանության կամ շահագործման,
- երբ ժողովուրդը մերժում է ստանում իր ինքնորոշման իրավունքի լիարժեք կիրառման վերաբերյալ այն երկրի կողմից, որի մաս է կազմում»[27]:

Այս ձևակերպումը լիարժեքորեն սահմանում է ինքնորոշման իրավունքի կիրառման դեպքերը և կարող է լավ հիմք լինել չափանիշների հա-

[26] *United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples, A/RES/61/295, 2007.*
[27] *Decision of the Supreme Court of Canada in the Matter of Section 53 of the Supreme Court Act, RSC 1985, at para. 154.*

մախմբի սահմանման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է այս սահմանումը լրացնել մի չափանիշով, որը հնարավորություն կտա որոշելու ինքորոշման իրավունքի կիրառման տարածքի սահմանները, և այն հատկանիշներով, որոնք բնութագրում են «ժողովուրդ» եզրը:

Դ. Մուտագիրովը ինքնորոշման իրավունքի տեսակետից «ժողովուրդ» բառի կիրառումը դիտարկում է «բնիկ ժողովուրդ» իմաստով: Ըստ նրա[28], հունգարացիները՝ Ավստրիայում, օսերը՝ Վրաստանում, լեզգիները և հայերը՝ Ադրբեջանում, քրդերը Իրանում, Իրաքում, Թուրքիայում և Սիրիայում փոքրամասնության վիճակում են հայտնվել այդ ժողովուրդների բնական իրավունքների ոտնահարման հետևանքով՝ պետական և վարչական սահմանները որոշելիս: Նրանք ապրել և շարունակում են ապրել իրենց հինավուրց հողերում, այն նույն մշակութային, կրոնական, լեզվական միջավայրում, որտեղ ապրել են իրենց նախնիները՝ իրենց կամքից անկախ հայտնվելով տարբեր երկրների կազմում: Իրենց հայրենի հողում իրենք մեծամասնություն են, հիմնական, բնիկ ժողովուրդն են: Միաժամանակ, նա հստակ տարանջատում է բնիկ ժողովուրդներին ազգային փոքրամասնություններից. «Ռուսները Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում ազգային փոքրամասնություններ են, իսկ աբխազները, օսերը և ուրիշները՝ Վրաստանում, լեզգիները և հայերը՝ Ադրբեջանում, բուգանդաները և տորոները Ուգանդայում բնիկ ժողովուրդներ են… որոնք գաղութարար երկրների հեռանալուց հետո հայտնվել են բաժանված վիճակում՝ նախկին գաղութային երկրների տարածքներում: Այդ երկրորդները (բնիկ ժողովուրդները - Թ. Տ.), ի տարբերություն առաջինների (ազգային փոքրամասնությունների - Տ. Թ.), *ունեն միջազգայնորեն ճանաչված իրավունքներ* (նկատի ունի, մասնավորապես, ինքնորոշման իրավունքը - Տ. Թ.) *և կարող են դրանք օգտագործել այն ծավալով, որոնք իրենք անհրաժեշտ են համարում»*[29]:

Ավելի մանրամասնած չափանիշների կիրառման կողմնակից է Կ. Պարկերը, որը տևական ժամանակահատված զբաղվել է ասիական հակամարտությունների (Բիրմա, Քաշմիր, Տիբեթ, Շրի Լանկա) և ինքնորոշման իրավունքի հիման վրա դրանց կարգավորման հնարավորության ուսումնասիրությամբ, և առաջարկում է[30] օգտագործել ՄԱԿ-ի երկու կարևոր ուսումնասիրություններն[31] ինքնորոշման իրավունքի վերաբերյալ, որոնց հեղինակները նշում են ինքնորոշման կիրառման հետևյալ չափանիշները՝

- վիճարկվող տարածքի վրա անկախության կամ ինքնաղեկավարման նախապատմություն,
- առանձնահատուկ մշակույթ,
-ինքնակառավարման ցանկություն և կարողություն:

---

[28] **Мутагиров Д. З.,** *Права и свободы человека, М., 2006, с. 427.*

[29] Նույն տեղում, էջ 432:

[30] **Parker K.**, նշվ. աշխ.:

[31] **Critescu A.,** *The Right to Self-Determination, UN Doc. E/CN.4/Sub.2/404/Rev.1, UN Sales N E.80.XIV.3(1980),* **Gros Espiel H.**, *The Right to Self-Determination, UN Doc. E/CN.4/Sub.2/405/Rev.1, UN Sales N E.79.XIV.5(1980),*

Այս չափանիշների կիրառման պարագայում, ըստ Պարկերի, օրինակ, Քաշմիրի ինքնորոշման պահանջը բացառիկ ուժ ունի այն պատճառով, որ այդ տարածքը պարզորոշ զատվում է շատ հարյուրամյակների ընթացքում, մինչ գաղութացումն ունեցել է ինքնակառավարման երկար պատմություն, քաշմիրցիները խոսում են քաշմիրի լեզվով, որը, հիմքում ունենալով սանսկրիտը, հնդեվրոպական լեզու է և պարզորոշ տարբերվում է հինդիից և ուրդուից: Առանձնահատուկ է նաև քաշմիրի մշակույթը՝ ազգագրական արվեստ, տարազ, ավանդույթներ, խոհանոց: Իսկ ամենակարևոր գործոնը քաշմիրցիների ինքնուրույն կառավարման հավաքական, միասնական ձգտումն է:

Ակնհայտ է, որ երեք չափանիշներն էլ «ժողովուրդ» եզրի բնութագրիչներ են և կարող են օգտագործվել որպես լրացուցիչ չափանիշներ Կանադայի Գերագույն դատարանի սահմանման համար:

Մի փոքր ավելի մանրամասնող մոտեցում է առաջարկում Պ. Թորնբերին՝ հիմք ընդունելով այն բնութագրիչները, որոնք, ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ժողովուրդը (ազգը) սահմանելիս հաշվի են առնվում.

- մշակութային միատարրությունը (համասեռությունը),
- լեզվական միասնությունը,
- ընդհանուր պատմական ավանդույթը,
- ազգային կամ կրոնական ինքնությունը,
- կրոնական կամ գաղափարական միասնությունը,
- տարածքային միասնությունը(կապվածությունը),
- ընդհանուր տնտեսական կյանքը[32]:

Այս փոխլրացնող կամ մանրամասնող մոտեցումներում օգտագործված չափանիշները Լ. Բրայլմայերը բնութագրում է[33] որպես «օբյեկտիվ տարրեր» և առաջարկում դրանք բաժանել երկու խմբի՝ տարածքային բնութագրիչ (այն տարածքը ճշտող, որում ցանկանում է ինքնորոշվել տվյալ ժողովուրդը) և ազգային բնութագրիչ (վերոհիշյալ մյուս վեց բնութագրիչները):

«Օբյեկտիվ» տարրերին ոմանք ավելացնում են[34] նաև «սուբյեկտիվ» տարրեր, որոնք առնչվում են անհատների հանրային ընկալումներին՝ որպես ժողովուրդ: Անհրաժեշտ է, որ մարդկանց այդ խումբը հստակ արտահայտի, որ միասնական է իր ապագային միտված արժեքների ընկալման և հանրային նպատակի հարցում: Մեկ այլ «սուբյեկտիվ» գործոն է համարվում այն հանգամանքը, թե այդ խումբն ինչ աստիճանի կենսունակ քաղաքական կազմակերպություն կարող է ձևավորել: Այդուհանդերձ, թեև հանրային-քաղաքական կյանքի կազմակերպման, կազմավորվող նորանկախ պետության զարգացման տեսակետից նշված «սուբյեկտիվ» գործոններն ունեն կարևոր նշանակություն, սակայն ինքնորոշման իրավունքի կիրառման և, մասնավորապես, անկախության հռչակման կամ ճանաչ-

---

[32] **Thornberry P.,** *The Democratic or Internal Aspect of Self-Determination. – Modern Law of Self - Determination (Tomushat Christian ed.), 1993, p. 102, 124.*

[33] **Brilmayer L.,** *Secession and Self-Determination: A Territorial Interpretation, Yale Journal of International Law, 1991, N 16, p. 177, 178-79.*

[34] **Nanda V.,** *Self-Determination Under International Law: Validity of Claims to Secede.-Case W. Res. Journal of International Law, 1981, N 13, p. 257, 276.*

ման առումով այդ գործոնները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ: Միջազգային իրավունքը հստակ սահմանել է, որ քաղաքական, տնտեսական, սոցիալական կամ կրթական խնդիրները չեն կարող գործոն համարվել անկախության հռչակման կամ, որ նույնն է, ինքնորոշման իրավունքի կիրառման համար: Մասնավորապես, 1960 թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ընդունած «Գաղութացված երկրներին և ժողովուրդներին անկախություն տրամադրելու մասին» հռչակագրի 3-րդ կետի համաձայն՝ «անբավարար քաղաքական, տնտեսական, սոցիալական պատրաստվածությունը կամ անբավարար պատրաստվածությունը կրրթության բնագավառում չպետք է օգտագործվի որպես պատրվակ՝ անկախության տրամադրման ուշացման համար»[35]: Այդ առումով Թորնբերիի հիշատակած վերջին բնութագիրը հարկ է դասել «սուբյեկտիվ» բնութագրիչների շարքին: Վերոհիշյալ չափանիշներին, ընդհանուր առմամբ, համադրելի է Գ. Ստարովոյտովայի՝ այլ տեսանկյունից ձևակերպած հինգ չափանիշներից բաղկացած համախումբը[36], որը նա մշակել է նախկին ԽՍՀՄ տարածքներում գոյություն ունեցող հակամարտությունների (Աբխազիա, Հարավային Օսեթիա, Ղրիմ, Լեռնային Ղարաբաղ) անմիջական դիտարկման, ինչպես նաև այդ և Էրիթրեայի դեպքերի՝ ԱՄՆ Խաղաղության ինստիտուտում իրականացված հետազոտության հիման վրա: Թեև այդ համախումբն ունի թերություններ, սակայն, կարևորելով հատկապես մի շարք հիմնավորումներ, այն ստորև դիտարկվում է ամ-բողջությամբ:

Չափանիշ 1 - **Անտանելի գոյություն**

… Լեռնային Ղարաբաղում հայերը հակամարտության հենց սկզբից հասցվել էին ֆիզիկական գոյության սահմանին՝ տնտեսական շրջափակմամբ, արտաքսումներով և սպանություններով: Կասկածից դուրս է, որ նույն չափանիշը, որը Մայրցամաքային կոնգրեսը օգտագործում էր 1776 թ., աշխարհի առաջ ինքնորոշման շարժումը արդարացնելու համար, կարող է կիրառվել Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ: … Իհարկե, ԽՍՀՄ փլուզումը որոշ չափով կարելի է համեմատել աշխարհի այլ երկրներում ապագաղութացման գործընթացի հետ:

Չափանիշ 2 - **Պատմական իրավունք**

Պետք է հաշվի առնել նաև, այսպես կոչված, «տարածքի նկատմամբ պատմական իրավունքը», որը ներկայացված չափանիշների շարքում ամենադժվար սահմանվողն է: Այդուհանդերձ, այն ունեցել է իր կիրառումը, երբ 1948 թ. ՄԱԿ-ը Պաղեստինում ստեղծեց Իսրայել պետությունը:

Չափանիշ 3 - **Բնակչության էթնիկական կազմը**

Որոշ դեպքերում, ինչպես օրինակ, Նախիջևանի Հանրապետությունը, Աբխազիան, Ղրիմը, ԱՄՆ-ը և այլն, որտեղ էթնիկական կազմը միանգամայն այլ էր հարյուր, երկու հարյուր կամ հինգ հարյուր տարի առաջ, այս չափանիշը հակասության մեջ է մտնում նախորդ չափանիշի հետ:

Չափանիշ 4 - **Ժողովրդական կամարտահայտությունը**

[35] http://www.un.org/documents/ga/res/15/ares15.htm
[36] **Starovoitova G.,** նշվ. աշխ., էջ 38-41:

Որոշ գերակայություն ունի ինքնորոշվող տարածքի ժողովրդի կամքի ժողովրդավարական արտահայտությունը, որին պետք է մասնակցի այդ տարածքի ժողովուրդը՝ անկախ էթնիկական պատկանելությունից: Այդ կամքը կարող է արտահայտվել անմիջականորեն՝ հանրաքվեի կամ, եթե դա հնարավոր չէ, ժողովրդի՝ ժողովրդավարորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, ինչպես ԱՄՆ հիմնադիր հայրերը ընդունեցին Անկախության հռչակագիրը:

Չափանիշ 5 - **Պատասխանատվություն՝ հետևանքների համար**

Այս չափանիշը բնութագրում է ինքնորոշվող ժողովրդի պատրաստ լինելը ինքնորոշումից հետո առաջացող իրավիճակում մարտահրավերների հաղթահարմանը:

Ակնհայտ է, որ վերջին չափանիշը «սուբյեկտիվ» գործոնների շարքին պետք է դասել, երրորդ և չորրորդ չափանիշները հակասության մեջ են, երկրորդ չափանիշը պահանջում է ենթաչափանիշի՝ ժամանակային միջակայքի սահմանում, իսկ առաջին չափանիշի գնահատումը կարող է վիճելի լինել, եթե այդ նպատակով ենթահամախումբ չսահմանվի: Այսպիսով, թեև ներկայացված երեք համախմբերն ունեն որոշ ընդհանրություններ, արձանագրում են մի շարք կարևոր չափանիշներ, այնուամենայնիվ, դրանցից որևէ մեկը չի կարող համարվել լիարժեք համախումբ: Միաժամանակ, այդ համախմբերի, ինչպես նաև մի շարք այլ ուսումնասիրությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանրական համախմբի բացակայության պատճառը ոչ թե դրա ճշգրիտ ձևակերպման բարդությունն է, այլ քաղաքական լուծումների համար խուսանավումների թեկուզև փոքր, ձևական հնարավորության պահպանումը: Այդուհանդերձ, անհրաժեշտ է դրանք համադրել՝ Կանադայի Գերագույն դատարանի սահմանման հետ չափորոշիչների համախումբ ձևավորելու նպատակով: Բուլյան հանրահաշվի[37] լեզվով նման համախմբի ընդհանուր բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$Ի = f(\textbf{Ժ}, S, \textbf{Ա}), \qquad (1)$$

որտեղ՝

Ի,**Ժ**, **S**, **Ա**-բուլյան մեծություններ են, որոնք կարող են ունենալ [0,1] արժեքներ, ընդ որում,

Ի-ինքնորոշման իրավունքի կիրառման հիմքերի առկայության (Ի=1) կամ բացակայության (Ի=0) ցուցիչն է,

Ժ-տվյալ ժողովրդի կարգավիճակի չափանիշը, որի դեպքում կիրառելի է ինքնորոշման իրավունքը,

S-ինքնորոշման իրավունքի կիրառման տարածքային չափանիշը, որը բնութագրում է ինքնորոշման իրավունքի կիրառման տարածքի սահմանման հիմքի առկայությունը,

[37] **Шевелев Ю. П.,** *Булева алгебра и логика поиска семантической информации, Томск, 1975.* **Romme A.,** *Boolean Comparative Analysis of Qualitative Data. A Methodological Note. – Quality & Quantity, vol. 29, N 2, 1995.*

Ա-ինքնորոշման իրավունքի կիրառման ազգային ինքնության չափորոշիչը:

Ըստ Կանադայի Գերագույն դատարանի վերոհիշյալ սահմանման՝ կա երեք Ժ չափանիշ, որոնցից մեկի առկայությունը բավարար է ինքնորոշման իրավունքի կիրառման համար, հետևաբար՝

$$\text{Ժ}=\sum_{i=1}^{3} \text{Ժ}_i ,$$

ընդ որում՝

Ժ_1 - երբ ժողովուրդը կառավարվում է որպես գաղութային կայսրության մի մաս,

Ժ_2 - երբ ժողովուրդը ենթակա է օտարերկրյա գերիշխանության կամ շահագործման,

Ժ_3- երբ ժողովուրդը մերժում է ստանում իր ինքնորոշման իրավունքի լիարժեք կիրառման վերաբերյալ այն երկրի կողմից, որի մաս է կազմում: Պարկերի, Թորնբերիի, Ստարովոյտովայի ներկայացրած՝ ժողովրդի (ազգային ինքնության) սահմանումների համադրման արդյունքում կարելի է ստանալ ազգային ինքնության չորս չափանիշ, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է մարդկանց տվյալ խմբին ժողովուրդ որակելու համար: Հետևաբար,

$$\text{Ա}=\prod_{j=1}^{4} \text{Ա}_j ,$$

որտեղ՝

Ա_1 - առանձնահատուկ մշակույթ,

Ա_2 - լեզվական առանձնահատկություն և միասնություն,

Ա_3 - ընդհանուր պատմական ավանդույթ,

Ա_4 - ազգային, կրոնական կամ գաղափարական միասնություն:

Այսպիսով, ոչ միայն ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի հստակ սահմանված և կիրառելի նորմ է, այլև կոնկրետ դեպքերում կիրառման հնարավորությունը ենթակա է միանշանակ հաշվարկի հետևյալ բանաձևով.

$$\text{Ի}=\text{Տ}\times\text{Ժ}\times\text{Ա}=\text{Տ}\times\sum_{i=1}^{3} \text{Ժ}_i \times\prod_{j=1}^{4} \text{Ա}_j : \qquad (2)$$

Բանաձևի գործնական պիտանիությունը և ճշգրտությունն ստուգված են վերջին տասնամյակների մի շարք դեպքերի համար: Թեև տեղի խնայողության նպատակով դրանք հոդվածում չեն ներկայացված, այնուամենայնիվ, արդյունքները վկայում են մեծ ճշտության մասին:

Լեռնային Ղարաբաղի դեպքի համապատասխանությունը ինքնորոշման իրավունքի կիրառման չափանիշներին: Ինքնորոշման իրավունքի կիրառման որևէ կոնկրետ դեպք ուսումնասիրելիս անհրաժեշտ է դիտարկել այդ դեպքի համապատասխանությունը (2) բանաձևի չափա-

նիշների հանրագումարային համախմբի բաղադրիչներից յուրաքանչյուրին ներկայացվող պահանջներին: Լեռնային Ղարաբաղի դեպքին նվիրված ուսումնասիրություններն այդ համապատասխանությունները դիտարկել են այն չափանիշների տեսակետից, որոնք ուսումնասիրողները կարևոր են համարել միջազգային իրավունքի շրջանակներում և չափանիշների՝ իրենց ձևակերպած համախմբի առումով: Միջազգային փորձագետների երկու խումբ դեռևս 2000 թ. պատրաստել և որպես զեկույց[38]՝ «Լեռնային Ղարաբաղի ճգնաժամը. լուծման ժամանակը», միջազգային կոնֆերանսին է ներկայացրել իր առաջարկությունները՝ միջազգային իրավունքի շրջանակներում խնդրի լուծման վերաբերյալ՝ հիմնավորելով ինքնորոշման իրավունքի կիրառման անհրաժեշտությունը: Ըստ այդ զեկույցի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ուսումնասիրությունը միջազգային իրավունքի ներքո՝ ինքնորոշման իրավունքի տեսակետից, վկայում է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի ինքնորոշման, այդ թվում և անկախ պետություն ունենալու իրավունք, քանի որ լիովին բավարարվում են դրա համար անհրաժեշտ օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները: Լեռնային Ղարաբաղի հայերն օբյեկտիվորեն տարբերվում են ադրբեջանցիներից.

- նրանք խոսում են հնդեվրոպական ընտանիքին պատկանող հայոց լեզվի բարբառներից մեկով, մինչդեռ ադրբեջանցիները խոսում են թուրքերենի բարբառներից մեկով, որը պատկանում է ալթայան լեզվախմբին ($Ա_2$),
- կրոնով առաջինները քրիստոնյաներ են, երկրորդները՝ գերազանցապես շիա մահմեդականներ ($Ա_4$),
- առաջինները կրողներ են հայ ժողովրդի հնագույն մշակույթի և փորձառության, մինչդեռ ադրբեջանցիներն այժմ են ձևավորում ազգային ինքնությունը և կրողն են թուրքական փորձառության ($Ա_1$),
- Լեռնային Ղարաբաղն ունի տարածքային միասնության երկար ավանդույթ՝ որպես պատմական Հայաստանի տասնհինգ գավառներից մեկը, ապա նաև որպես Պարսկական կայսրության ներքո ինքնուրույն մելիքություն, իսկ խորհրդային տարիներին՝ էթնոտարածքային միավոր՝ որպես ինքնավար մարզ (Տ):

Գ. Ստարովոյտովայի ուսումնասիրությունները հաստատում են միջազգային իրավունքի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի խնդրի առնչությամբ վերոհիշյալ սկզբունքային մոտեցումը. «Միջազգային իրավական եզրաբանությամբ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է դիտարկվի ոչ թե որպես տարածքային վեճ, այլ ինքնորոշման դեպք, …և ազգերի ինքնորոշման իրավունքը գերակայություն պետք է ունենա պետության տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը կարող է և իրականում պետք է

[38] *The Nagorno-Karabagh Crisis: A Blueprint for Resolution. A Memorandum Prepared by the Public International Law&Policy Group and the New England Center for International Law&Policy. Report in International Conference "The Nagorno-Karabagh Crisis: A Time for Resolution". Washington D.C.,May 17th and 18th, 2000, p. 21.*

դիտարկվի որպես ժողովուրդ, որն ունի ինքնորոշման իրավունք»[39] (Ժ$_3$): Այդուհանդերձ, քանի որ Ստարովոյտովան նախընտրել է ինքնորոշման իրավունքի կիրառման այլ չափանիշներ, իր սկզբունքային հետևությունը նա հիմնավորում է երեք այլ փաստարկի միջոցով.

- Լեռնային Ղարաբաղը տևական ժամանակ եղել է ինքնավար մարզ Ադրբեջանի և նախկին ԽՍՀՄ կազմում և …փաստացիորեն անջատվել էր Ադրբեջանից դեռևս մինչ վերջինիս անկախ պետություն դառնալն ու ՄԱԿ-ին անդամակցելը (Տ),
- Ղարաբաղի ենթակայությունը Ադրբեջանին եղել է կամայական և այսօր խորհրդային կայսրության գաղութային համակարգի մնացուկն է (Ժ$_1$),
- Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իշխանությունը հանգեցրել է մարդու իրավունքների և ազգային փոքրամասնության[40] իրավունքնե- րի զանգվածային խախտումների: Այսօր՝ արյունալի հակամարտությու- նից մի քանի տարի հետո, ստատուս քվոյի հաստատումը չի երաշխավորում Լեռնային Ղարաբաղի հայերի ֆիզիկական անվտանգությունը՝ դեռ չխոսելով քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին:

Լեռնային Ղարաբաղի դեպքում Ա$_3$ և Տ չափանիշները բավարարող հարուստ նյութ է պարունակում Յ. Բարսեղովի կազմած փաստաթղթերի և մեկնաբանությունների ստվարածավալ ժողովածուն[41], իսկ Ա$_3$, Ա$_4$ և Տ չափանիշները բավարարող՝ Չորբաջյանի, Տոնապետյանի և Մութաֆյանի ուսումնասիրությունը[42]:

Ակնհայտ է, որ արձանագրելով Լեռնային Ղարաբաղի դեպքի համա- պատասխանությունը ինքնորոշվող ժողովրդի կարգավիճակի չափանիշին (Ժ), տարածքային ինքնության չափանիշի (Տ) պահանջները բավարարող փաստարկումները, Ստարովոյտովան ավելորդ է համարում անդրադառնալ ազգային առանձնահատկությունների բացահայտման հարցին (միգուցե դա ակնհայտ համարելով), այլ կարևորում է մարդու իրավունքների հարգման խնդիրը: Սկզբունքորեն նմանատիպ դիրքորոշում ունի

[39] **Starovoitova G.**, նշվ. աշխ., էջ. 44-45:

[40] Ստարովոյտովան օգտագործել է ոչ ճիշտ եզր՝ »ազգային փոքրամասնություն« »բնիկ ժողովրդի« փոխարեն, ինչն ակնհայտորեն երևում է նաև նրա հիշյալ աշխատությունից (**Starovoitova G.**, նշվ. աշխ., էջ 38). »Շատ չխորանալով հին և միջին դարերի պատմության մեջ, այնուամենայնիվ, պետք է նկատել, որ հայկական կողմը կարող է ներկայացնել տպավորիչ թվով չեզոք աղբյուրներ, որոնք վկայում են, որ հայերը գերակշռել են տարածաշրջանում ավելի քան հազարամյակի ընթացքում: Թյուրքական բնակչությունը երևացել է այնտեղ XVIII դ. սկզբից ոչ շուտ՝ ի վերջո, իր կառավարումը հաստատելով հայ մեծամասնության վրա Ղարաբաղյան խանության ձևով«:

[41] *Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий (Сост., ред. Барсегов Ю. Г.), в 2 т., т. 1, М., 2008.*

[42] **Chorbajian L., Donabedian P., Mutafian C.**, *The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabagh. London, New Jersey, 1994.*

նաև Հ. Ասենբաուերը[43], որը, ի տարբերություն Ստարովոյտովայի, հանգամանալից անդրադառնում է պատմական գործոնին՝ խնդրի համատեքստում դիտարկելով ոչ միայն դրա պատմական զարգացումները, այլև Ցեղասպանությանը, Նախիջևանի հայաթափմանը և հայ ժողովրդի պատմությանն առնչվող այլ հարցեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն են ունեցել զարգացումների վրա:

Ինչ վերաբերում է հանրային կամքի առկայությանը (Հ), ապա Լեռնային Ղարաբաղի պարագայում դա իր դրսևորումն ունեցել է. 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեին մասնակցեց Լեռնային Ղարաբաղի ընտրողների 82 տոկոսը, որոնցից 99.7 տոկոսը քվեարկեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության օգտին: Չափազանց կարևոր է, որ հանրաքվեն անցկացվել է մինչև Լեռնային Ղարաբաղից ադրբեջանցիների հեռանալը:

Ներկայացված ուսումնասիրությունների փաստարկումների դիտարկումը (1) բանաձևի կիրառման առումով վկայում է, որ Լեռնային Ղարաբաղի դեպքում ինքնորոշման իրավունքի հիմքերն ավելի քան բավարար են: Մասնավորապես, **Ժ** չափանիշի պարագայում թեև բավարար է միայն մեկ բաղադրիչի առկայությունը, Լեռնային Ղարաբաղի դեպքում բոլոր երեքն էլ առկա են: Միաժամանակ, կարևոր է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը նվիրված ուսումնասիրություններում, ընդհանուր առմամբ, կիրառվել են նույն չափանիշները, որոնք կիրառվում են ինքնո-րոշման իրավունքի իրացման չափանիշների ձևակերպմանը կամ այլ կոնկրետ դեպքերին նվիրված աշխատանքներում: Ընդ որում, այդ ուսումնասիրություններում օգտագործված է երկու մոտեցում.

- բավարար է համարվել առաջին աստիճանի (**Ժ**) չափանիշը՝ երկրորդ աստիճանի միայն տարածքային (**Տ**) չափանիշի հետ, քանզի այս մոտեցման պարագայում հստակ որոշվում է թե ինքնորոշման իրավունքը տրվյալ ժողովրդի պարագայում կիրառելու հնարավորությունը և թե այն տարածքը, որի նկատմամբ դա կիրառվելու է,
- այդ երկու չափանիշների հետ կիրառվում է նաև ազգային (**Ա**) չափանիշը, ինչն ավելի է ամրապնդում անջատվելու ձգտման հիմնավորումը:

Հեշտ է համոզվել, որ երկու դեպքում էլ Լեռնային Ղարաբաղի դեպքն անթերի է ինքնորոշման իրավունքի կիրառման տեսակետից:

Ինքնորոշման իրավունքի կիրառման խոչընդոտները և չկիրառման վտանգները: Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառումը սոսկ այս կամ այն ժողովրդին՝ սեփական կառավարման համակարգը ձևավորելու և դրա ներքո ապրելու հնարավորության ընձեռումը չէ: Հաճախ այդ իրավունքի կիրառման պահանջ է ներկայացվում այն դեպքում, երբ նման պահանջ ներկայացնող ժողովուրդը իր գոյատևման համար լուրջ վտանգներ է տեսնում: Պատահական չէ, որ ավելի հաճախ նման պահանջներ ներկայացվում են հակամարտությունների ծագումից առաջ կամ

[43] **Asenbauer H. E.,** *On the Right of Self-Determination of the Armenian People of Nagorno Karabakh. New York, 1993.*

հետո, քանի որ հակամարտությունների պատճառը, որպես կանոն, գաղութարարների կողմից երկու տարբեր ազգերի մեկ պետության սահմաններում դրանցից մեկի կառավարման ներքո դնելն է[44]: Միաժամանակ, ակնհայտ է, որ այդ իրավունքի ոտնահարումը տեղի է ունենում այնտեղ, որտեղ չեն հարգվում միջազգային իրավունքը, մարդու իրավունքները: Ավելին, քանի որ ժողովուրդների յուրաքանչյուր իրավունք կոլեկտիվ իրավունք է, դրա խախտումը ոչ այլ ինչ է, քան մարդու իրավունքների զանգվածային և կոպիտ խախտում[45]: Ըստ Ա. Մերեժկոյի՝ ազգային հարցի՝ ժողովուրդների (ազգերի) ինքնորոշման իրավունքի ճանաչման և իրացման միջոցով ժողովրդավարական լուծման միակ այլընտրանքը կարող է լինել ստիպողական ձուլումը, սեգրեգացիան կամ անգամ եղեռնը[46]: Մանավորապես, ըստ Ստարովոյտովայի, Լեռնային Ղարաբաղի դեպքը այն բանի բնորոշ օրինակ է, թե ինչպես ինքնորոշման խաղաղ խորհրդարանական պահանջի անտեսումը վաղ թե ուշ կարող է հանգեցնել լայնամասշտաբ քաոսային պատերազմի[47]:

Ընդ որում, վտանգված ժողովուրդը ստիպված է լինում դիմակայել ոչ միայն գոյատևման մարտահրավերներին, այլև այն դժվարություններին, որոնք անհրաժեշտ է լինում հաղթահարել ինքնորոշման իրավունքի իրացման ճանապարհին (իր ինքնորոշման իրավունքի իրացման համար պայքարող ժողովրդի իրավունքների սահմանափակում՝ ներպետական օրենսդրության վերանայման միջոցով, իրավապահ մարմինների կողմից հետապնդումներ և ճնշումներ, տեղահանումներ և այլն): Այդ պարագայում ինքնորոշման իրավունքի իրացման անհաջող փորձն ավելի մեծացնում է Մերեժկոյի նշած «այլընտրանքային» ելքերի հավանականությունը: Նման իրավիճակներում խիստ կարևոր է միջազգային հանրության վերաբերմունքը, քանզի դրանք միջազգային բնույթի խախտումներ են, որոնք չեն կարող արդարացվել՝ հղում անելով պետության կողմից սեփական ներքին իրավասությունների գործադրման իրավունքին[48]: Ինքնորոշման իրավունքի իրացման նման զարգացումների օրինակ է Արևելյան Թիմորի դեպքը[49]: Ինդոնեզիան երկար ժամանակ չէր ընդունում Արևելյան Թիմորի ինքնորոշման իրավունքը: Թիմորցիները տևական պայքար սկսեցին իրենց ինքնորոշման համար, ինչը կոպտորեն հետապնդում էին Ինդոնեզիայի իշխանությունները: Միայն այն բանից հետո, երբ ՄԱԿ-ը ստիպված էր զգուշացնել Ինդոնեզիային, որ կարող է վերջինիս պատասխանատվության կանչել ցեղասպանության համար, Ինդոնեզիան համաձայնեց Արևելյան Թիմորում հանրաքվե անցկացնել: Թեև Ինդոնեզիան շարունակում էր ճնշումներ բանեցնել թիմորցիների վրա, սակայն

---

[44] **Parker K.,** *նշվ. աշխ.:*

[45] *Международное право. М., 1987, с. 88.*

[46] **Мережко А.,** *Равноправие и самоопределение народов в контексте проблемы "непризнанных" государств,* www.regnum.ru/news/941589.html *(13.01.2008)*

[47] **Starovoitova G.,** նշվ. աշխ., էջ 44:

[48] *Международное право, с. 88.*

[49] **ԾգՅՈչՌՐՏՁ Ժ. ի.,** նշվ. աշխ. էջ 437*:*

համաշխարհային հանրության աջակցությամբ Արևելյան Թիմորն անցկացրեց հանրաքվե և անկախություն ստացավ:

Իհարկե, կան նաև ինքնորոշման իրավունքի իրացման քաղաքակիրթ դեպքեր: Կանադայի օրինակը[50], որը չվախեցավ Քվեբեկում անջատողական ձգտումներից և համաձայնեց այնտեղ հանրաքվե անցկացնել, շատ օգտակար և օրինակելի է նման խնդիրներ ունեցող երկրների համար: 1995 թ. հոկտեմբերին Քվեբեկում անցկացված հանրաքվեին մասնակցեց ընտրողների 94 տոկոսը, անկախությանը «կողմ» քվեարկեց մասնակիցների 49.4 տոկոսը, դեմ՝ 50.6 տոկոսը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այս դեպքը հաստատեց. հենց քաղաքակիրթ հարաբերությունների պարագայում, երբ հարգվում է ազգերի ինքնորոշման իրավունքը, ինքնորոշվողների մեծամասնությունը կարող է չքվեարկել անկախության օգտին: Ավելին, թեև հանրաքվեի արդյունքը որոշվեց ձայների ընդամենը 0.6 տոկոսի շնորհիվ, անկախության կողմնակիցներն այն ընդունեցին առանց բողոքի լուրջ դրսևորումների:

Ինքնորոշման իրավունքի կիրառման հակառակորդների հիմնական «փաստարկն» աշխարհում նման մի քանի տասնյակ խնդիրների առկայությունն է՝ որպես անկայունության աղբյուր: Սակայն հենց այն փաստը, որ այդ խնդիրները կան տևական ժամանակահատված և մերթ ընդ մերթ սրվում են ու հանգեցնում բախումների և մարդկային զոհերի, խոսում է ոչ թե լուծումներից խուսափելու օգտին, այլ ճիշտ հակառակը: Միջազգային հանրությունը պատասխանատվություն է կրում հակամարտությունների կարգավորման համար՝ միջազգային իրավունքի շրջանակներում: Միջազգային իրավունքի նորմերի ոտնահարումներն ու անտեսումները արդեն իսկ զգալիորեն սասանել են դրանք ընդունողների ու կիրառողների վարկը: Ավելին, սկզբունքային դիրքորոշման բացակայությունն ու պատեհապաշտական կեցվածքի շարունակական դրսևորումը կարող են դառնալ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ) նկատմամբ զգալիորեն խորացած թերահավատության այն խթանը, որից հետո այդ կազմակերպությունների գոյությունը կկորցնի որևէ իմաստ:

Եզրակացություններ

1. Ինքնորոշման սկզբունքը ոչ միայն միջազգային իրավունքի յոթ հիմնական սկզբունքներից մեկն է, այլև ունի բարձրագույն՝ *erga omnes* և *jus cogens* նորմի կարգավիճակ:

2. Ինքնորոշման իրավունքի կիրառման պայմանների ու չափանիշների սահմանումը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հիմնավոր և անաչառ վճիռ կայացնելու և սուբյեկտիվ դիրքորոշումները բացառելու նպատակով:

3. Պայմանների ու չափանիշների առաջարկվող համախումբը անհրաժեշտ և բավարար է ինքնորոշման իրավունքի կիրառումը հիմնավորելու կամ մերժելու համար՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

---

[50] **Bayefsky A. F.,** *Self-Determination in International Law: Quebec and Lessons Learned: Legal Opinions. Hague, London, Boston, 2000.*

4. Լեռնային Ղարաբաղի դեպքը լիովին բավարարում է ինքնորոշման իրավունքի կիրառման պայմանները և չափանիշները:

5. Ինքնորոշման իրավունքի կիրառման ձգձգումները՝ անկախ հիմնավորումից, պարբերաբար պատճառ են դառնում նոր բախումների ու մարդկային զոհերի, իսկ եթե հակամարտության կողմ է ոչ ժողովրդավարական երկիր, ապա այն կարող է հանգեցնել տեղահանության կամ ցեղասպանության:

СТАТУС ПРИНЦИПА САМООПРЕДЕЛЕНИЯ, КРИТЕРИИ И УСЛОВИЯ ЕГО ПРИМЕНЕНИЯ

ТОРОСЯН Т. С.

Резюме

Принцип самоопределения народов, в отличие от принципа территориальной целостности, являясь одним из семи основных принципов международного права, имеет высший статус erga *omnes* и *jus cogens* нормы. В качестве условий и критериев применения этого принципа в конкретных случаях исследователями предлагаются разные сочетания определенных факторов. Нами выдвигается обобщенная и минимизированная система критериев, в качестве же условий применения принципа самоопределения следует использовать условия, сформулированные Верховным Судом Канады. Предлагается также булева формула определения применимости принципа самоопределения для конкретного случая. Данная формула, а также анализ условий и критериев случая Нагорного Карабаха указывают на правомерность реализации самоопределения народа Нагорного Карабаха.